ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 27 դեկտեմբերի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով «Արինե Քար Ուոշ» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի եւ 42.1-րդ հոդվածի՝ «Արինե Քար Ուոշ» ՍՊԸ-ն 2011թ. դեկտեմբերի 13-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, մասնավորապես՝ վերջինիս 1-ին, 3-րդ, 6-րդ, 14.1-րդ եւ 23-րդ հոդվածների պահանջներին:

Վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի 23.11.2010թ. ՍԴՈ-926 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ դիմողը գտնում է, որ նշված օրենքի վիճարկվող իրավանորմերի կիրառման եւ մեկնաբանման հարցում, ի խախտումն ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի պահանջների, ձեւավորվել է հակասական դատական պրակտիկա: Վիճարկվող իրավադրույթների եւ այլ իրավական ակտերի համադրված վերլուծության արդյունքում՝ դիմողը եզրահանգում է, որ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ

օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության՝ վերը հիշատակված հոդվածների պահանջներին:

1. Սույն անհատական դիմումով գործի քննությունը մասնակիորեն ենթակա է մերժման, քանի որ առկա են դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված եւ օրենքով սահմանված ներքոհիշյալ հիմքերը:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածն օրենքին է վերապահել սահմանադրական դատարան դիմելու կարգի սահմանումը: Նշված հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը նախատեսում է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց անհատական դիմումների ընդունելիության հստակ ու կոնկրետ պայմանները: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարան դիմում կարող է ներկայացնել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի նկատմամբ վիճարկվող օրենքի դրույթը կիրառվել է գործը լուծող **վերջնական դատական ակտով:** Դիմումի եւ դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի նկատմամբ չեն կիրառվել նրա կողմից վիճարկվող՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները:

Հարկ է արձանագրել, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որեւէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ /ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշման 6-րդ կետ եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետ/:

2. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի առնչությամբ անհրաժեշտ է մատնանշել, որ առկա չեն դիմումի քննությունը մերժելու՝ օրենքով ամրագրված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 2-րդ կետով, 69-րդ հոդվածով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Արինե Քար Ուոշ» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործը՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի մասով ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

3. Տվյալ անհատական դիմումով գործի քննության ընդունումը՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի մասով մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

27 դեկտեմբերի 2011 թվականի
ՍԴԴԿՈ/2-17